յին պատի մեծ խորշի մէջ, հողմնահարուած, 7 տողանոց, Խաղբակեան Վասակ իշխանի որդի Պռօշի՝ 1244 թուակիր վիմագրի կողքին) յայտնում է խիստ մեծածաւալ նուիրատուութիւնների մասին. «{Յուս}ովն Ա՞ստուծո՛յ, ես՝ Դեսում, որդի Սիսաքին, ամուսին իմ՝ Մամա, միաբանեցաք ս՛ուրբ ուխտիս եւ տվաք Մ՛ուրբ Գերգա ի մեր հայրենե՛աց նովս Ղ{...} Ածերածու Մ՛ուրբ Գերգի մեր տնաջաղաց[52] իւր հողի Խոշոտլարէն ու զՁկնաւազն ու {...}... Միաբանք տվին :Գ: ժ{ամ...}...»[53]: Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ մօտաւորապէս 1250 թ. Հասան Ջալալ իշխանի գլխաւորութեամբ մոնղոլ փոխարքայ Սարթախի մօտ ժամանած 5-6 հոգանոց խմբի մէջ էր «եւ զԴեսում իշխանն՝ պարկեչտ պատանի»[54], որին հնարաւոր է համադրել վերջին վիմագրում յիշատակուած՝ Սիսաքի որդի եւ Մամայի ամուսին Դեսումի հետ: Նշենք նաեւ, որ, ինչպէս յայտնի է Հաղբատի Ս. Աստուածածին (անուանուած՝ Խաթունաչէն) եկեղեցու 6 տողանոց ընդարձակ, ցաւօք, անթուակիր շինարարական վիմագրից («Կամաւն Ա՞ստուծո՛յ, շինեցաւ եկեղեցիս արդեամբք Խաթունին՝ {դստեհ}ր Հասանայ, յազգէ Դեոմեանց, որ բերաւ ի Խաչենոյ յամուսնութի՛ւն Զաքարիա, որ էր տէր Գագա եւ Տաւշո, Գարգմանա եւ Տէրունականին եւ այլոց գաւառաց: Ընդ որում եկեալ եղբարք իւր՝ Սենեքերիմ եւ Սեւադա, եւ փոխեալ ի Քրիստո՛ս՝ եղան առ դրան կաթողիկեիս. իսկ Խաթունն վ՛ս՝ յիշատակի նոցա եւ իւր չինեաց զսա...»[55]), Դեսումեանների մի ճիւղը ԺԲ. դ. վերջում կամ ԺԳ. դ. սկզբին տեղափոխուել է Լոռի (Բլուզ Զաքարէ Վահրամեանը զոհուել է 1204/ 1205 թ.[56]): Հաղբատի տապանատան կենտրոնական շարքի չիրմաքարերի մէջ կան «Սեւադայ» եւ «Սինաքերիմ՝ թ[ո]ռն աւագ Սենաքերիմա» գրութիւններով քարեր (դրանց միջեւ միայն երկու տապանաքար կայ)[57], որ կարող են վերագրուել Խաթուն

:ՈՒԷ: Էր *[=1158 թ.]*: Ես՝ Ս/մպատ՝ որդի / Վասակա, կաճ/գնեցի զխ/աչս որդ/ոյ իմոյ Դաւ/թոնիս, որ կիս/աւրեա փոխ/եցաւ ի Քրիստո՛ս») կապել Հասան Դեսումեանի միւս թշնամու՝ Գրիգոր Մեծի եղբայր Սմբատ Վասակեանի ռետ (աշխարհագրական միջավայրը յարմար է, խնդիր կայ լոկ ժամանակի ռետ կապուած):

52 Կարելի է վերծանել նաեւ՝ *Մերտնա[յ] ջաղաց* փխ *մեր տնաջաղաց*:

53 Նոյն տեղում, էջ 28, N 57:

54 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, աշխատասիրութեամբ **Կ. Ա. Մէլիք-Օհանջանեանի**, Եր., 1961, գլ. ԾԵ, էջ 359: Պատմիչը նշում է նաեւ Գրիգոր Տղայ իշխանին, Մարկոս վարդապետին եւ Գրիգոր եպիսկոպոսին:

55 **Կ. Ղաֆադարեան**, *Հաղբատ. ճարտարապետական կառուցուածքները եւ վիմական արձանագրութիւնները*, Եր., 1963, էջ 220 (N 111): Շարունակութեան մէջ ասում է «Եւ ես՝ տէր Յովհաննէս եւ միաբանքս Հաղբատա, տուաք սոցա Խ-ունք մի պատարագ ի տարեջն...»: Յիշատակուած վանահայր-եպիսկոպոսը կարող է լինել ԺԲ. դ. ամենավերջից մինչեւ ԺԳ. դ. 20-ական թթ. տիրակալած Յովհաննէս Ա-ն՝ Գրիգոր Ա Ծարեցու որդին, կամ, առաւելագոյնը՝ նրան յաջորդած նոյնանուն եղբօրորդին (Հասան Ա Ծարեցու եւ Երկայնաբազուկ Դօփ իշխանուհու որդին), որի յաջորդ Համազասպ եպիսկոպոսի առաջին թուակիր արձանագրութիւնը 1242-ից է (իսկ մինչեւ դարավերջ Հաղբատի եպիսկոպոսներ են եղել եւս երկու Յովհաննէսներ, որոնցից վերջինն էլ էր Ծարի իշխանատոհմից): Հմմտ. **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, գլ. Ա, էջ 98-99: Տե՛ս նաեւ ստորեւ:

56 Տե՛ս **Ա. Ի. Շահնազարեան**, *Վահրամեանների իշխանութիւնը*, Եր., 1990, էջ 67-68, 128: Ի դէպ, ուսումնասիրողի կարծիքով՝ Խաթունաշէնի եկեղեցու շինարարական վիմագիրը կարող էր գրուած լինել մինչեւ Զաքարէի եւ Խաթունի որդի Վահրամ Բ Գագեցու կողմից Շամքորի ազատագրման ժամանակը (վիմագիրը Վահրամեանների տիրոյթների շարքում այդ քաղաքը չի յիշատակում), այսինքն՝ 1205-1216/1217 թթ. միջակայքում (նոյն տեղում, էջ 70-71): Տեղին նշենք, որ Վահրամ Գագեցին վախճանուել է մոնղոլների դէմ 1249 թ. անյաջող ապստամբութեան ժամանակ կամ դրանից ոչ շատ անց, ըստ Արտ. Շահնազարեանի՝ մօտաւորապէս 1250/ 1251 թ. (նոյն տեղում, էջ 127-128):

57 Տե՛ս **Կ. Ղաֆադարեան**, *Հաղբատ*, էջ 187 (N 54, իբ, ի):